

**

Յունաստանի, Քարատաղի եւ Հայաստանի նկատմամբ վեց տերութիւններն տուին իրենց համիմաստ ծանուցագիրն Բ. Դրան:

Մեր ազգայիններն իրենց խանութներն գոցած՝ տրուելիք պատասխանին կը սպասեն:

Ընդհանուր կարծիքն այն է, որ տերութիւնները կարելի եղածին չափ պիտի աշխատին Հայաստանը քիւրտերու ձեռքէն ազատելու:

**

Թուրքիոյ մէջ բան մը ընել անկարելի է... Թիւրքիոյ մէջ ամեն բան կարելի է:

Վերահրատարակման հրաման տրուեցաւ այսօր «Թէրճէմանը Էֆքեաթ» օրագրին, որ բոլորովին խափանուած էր՝ անգղիական լրագրէ մը Հայոց նպաստաւոր յօդուած մը քաղելով հրատարակած լինելուն համար:

**

–Հայրի՛կ, առաջի օրը կ'ըսէիր, թէ կարմրնալն ամօթխածութեան նշան է:

–Այո՛, երբ որ մէկն իւր ըրածին վրայ կըխպնի եւ երեսը կը կարմրի՝ ըսել է թէ պարկեշտ է:

–Ըսել է թէ մայրիկս շատ պարկեշտ է:

–Ինչո՞ւ:

–Վասնզի ամեն առտու իւր երեսը կը կարմրցունէ:

Ո՛վ գոյներ, մի՞թէ դուք ալ այսչափ կը փոխեք եղեր ձեր նշանակութիւնը:

**

3 Յունիս

Բ. Դուռն բողոքել որոշեց Պերլինի դեսպանախորհրդոյ դէմ:

Քանի մը տարիներէ հետէ Բ. Դուռն այնչափ կը բողոքէ, որ դիւանագիտութեան մէջ կատարեալ *բողոքական* մը եղաւ: